

13252



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան



[Handwritten signature]

«03» 12 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 254 - 24

Նախաձեռնող՝

«Այ ջի էյ ինվեստ» ՍՊԸ
ք. Երևան, Փավստոս Բուզանդ 1

Գործունեությունը՝

Արմավիր համայնքի Արմավիր բնակավայրի
Լերմոնտովի 105/4 հասցեում բազմաբնակարան
բնակելի շենքերի կառուցում
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 254 - 24

« 03 » դեկտեմբերի 2024թ.

Արմավիր բնակավայրի Լերմոնտով փողոցի թիվ 105/4 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Այ ջի էյ ինվեստ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր բնակավայր

Ներածական մաս. Համաձայն «Այ ջի էյ ինվեստ» ՍՊԸ կողմից ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն)՝ Արմավիր բնակավայրի Լերմոնտով փողոցի թիվ 105/4 հասցեում նախատեսվում է բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արմավիրի համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. մայիսի 7-ի N 84 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականով գրանցված (կադաստրային ծածկագիր՝ 04-001-0503-0009) պետական սեփականություն հանդիսացող 1,0903 հա հողամասի սահմաններում, որի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցման իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Դիտարկվող տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լերմոնտով փողոցի թիվ 105/4 հասցեում: Տարածքում քանդման ենթակա շինություններ չկան: Կից գտնվում են կառուցապատումից ազատ հողամասեր և ցածրահարկ բնակելի տներ:

Համաձայն իրականացված ինժեներա-երկրաբանական հետազոտությունների՝ գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Արմավիրի հարթավայրի սահմաններում, նրա հյուսիս արևմտյան մասում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 870.0 մ սահմաններում: Կլիմայական շրջանը տաք է:



Տիպ 2-ը (այս տիպով նախատեսված է N 1,3,4 շինությունները) իրենից ներկայացնում է 56x20 մ արտաքին առավելագույն չափերով 5 վերգետնյա հարկերից բաղկացած շինություն: Շինությունն ունի 2 մուտք դեպի բնակելի հարկեր, 2 աստճանավանդակ (աստճանավանդակի դռները հակահրդեհային են և ինքնափակվող) և 2 վերելակ: Շինության վերգետնյա հարկերից յուրաքանչյուրում նախատեսվում է 14 բնակարան: Ընդհանուր ամբողջ շինությունում կա 70 բնակարան:

Տանիքը հարթ է՝ ներքին ջրահեռացմամբ:

Հողատարածքի հարավային հատվածում նախատեսվում է հանգստի զոնա և խաղահրապարակ՝ մոտ 800 քմ մակերեսով:

Որպես հողատարածքի մուտք օգտագործվելու է համայնքային հողատարածք՝ 36.2 քմ մակերեսով: Հողատարածքի օգտագործումը որպես մուտք նախատեսվում է համաձայնեցնել Արմավիր համայնքի հետ նախագծման վերջնական փուլում՝ շինարարության թույլտվության ստացման ժամանակ:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված՝ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում: Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր:

Հրդեհանվտանգության նպատակով շենքերում տեղադրվելու են հակահրդեհային հիդրատներով և օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային (հակաձխային) արտածման համակարգեր: Շենքերն ապահովվելու են էվակուացիոն աստիճանավանդակներով, տեղադրվելու են վերելակներ:

Շենքերը՝ ներառյալ ստորգետնյա ավտոկայանատեղին, ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով (սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ, թեքահարթակներ, սանհանգույցներ և այլն):

Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել տարածքի հարևանությամբ անցնող d=300 մմ ջրատարից/մոտ 220 մ հեռավորությամբ/, կոյուղին՝ հնարավոր կլինի միացնել d=350 մմ կոյուղատարին/տարածքից 1200 մ հեռավորությամբ/:

Էլեկտրամատակարարումը հնարավոր կլինի իրականացնել նախատեսվող նոր չոր տիպի 10/04 կՎ լարման 1000 ԿՎա ենթակայանից:

Պոմպակայանը և էլ. ենթակայանը տեղակայվելու են շինություն 2-ի նկուղային հարկում, որոնց մակերեսներն են համապատասխանաբար՝ 38.1 քմ և 11.3 քմ:

Տների ջեռուցումը նախատեսվում է տեղային կաթսաների միջոցով: Առանձին կաթսայատուն չի նախատեսվում: Բնակելի տների օդափոխությունը նախատեսվում է հորանների միջոցով, ինչպես նաև բնական հողմահարման միջոցով:

Շենքերում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և, համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտագործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Նախապատրաստական փուլում կատարվելու են շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով, էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, շինանյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում, գիշերային լուսավորվածության ապահովում և այլն: Հիմնական փուլում իրականացվելու է շինարարություն՝ ըստ ժամանակացույցի և գրաֆիկի:



Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքի կանաչապատումն իրականացվելու է Կառավարության 2018 թվականի փետրվարի 2-ի N 108-Ն որոշման համապատասխան: Զրոյական նիշում իրականացվելու է 4533,7 մ² (40 %) մակերեսով կանաչապատում ծառատնկման (տեսակային կազմը և քանակը ներկայացված է Հաշվետվությամբ), սամշիտի (450 գծմ), ծաղկանոցի (թզուկ վարդեր՝ 500 մ²) և սիզամարգի (4000 մ²) միջոցով: Կանաչապատման նպատակով անհրաժեշտ բուսահողի (400 մ³) ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումն իրականացվելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նախապես համաձայնեցնելով Արմավիրի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային:

Նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելելու, մեղմելու նպատակով մշակվել են միջոցառումներ: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ (մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, (CO, NOx)) արտանետումների չափումներ, աղմուկի, թրթռումների, հողերի աղտոտվածության, կենսաբազմազանության և այլն մշտադիտարկումներ): Մշտադիտարկումները կատարվելու են մեկ / երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսվել է 2.520 հազար ՀՀ դրամ:


Պատճառաբանական մաս. Համաձայն Հաշվետվության՝ շենքերը կառուցվելու և շահագործվելու են ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները շինարարության փուլում լինելու են կառավարելի և կրելու են կարճատև բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Արմավիրի մարզապետարանը և համայնքապետարանը: Հաշվետվությունը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի ղեկավարի նստավայրում իրականացվել են երկու հանրային լսում: Նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների կատարմանը, ժամանակացույցին, դրանց բավարար չլինելու դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
2. Ինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել Հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, դրանց չբավարարման դեպքում նախատեսել հավելյալ միջոցառումներ:
3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 72-Ն որոշման համաձայն, Արմավիր քաղաքի տարածքում հանդիպում են Օշան թաղիքային (*Salsola*)



tomentosa (Moq.) Spach) վտանգված և Սֆերոֆիզա աղուտային (Sphaerophysa salsula DC.) խոցելի տեսակները՝ անհրաժեշտ է նախատեսված մշտադիտարկման աշխատանքների ընթացքում տեսակներին բնորոշ առանձնյակների հանդիպման դեպքում ևս իրականացնել պահպանության և պաշտպանության միջոցառումներ:

4. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ տեղական ինքնակառավարման մարմնի հետ համաձայնեցված՝ ապահովելով Հաշվետվությամբ ամրագրված բարեկարգման և կանաչապատման լուծումները:
5. Շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկը և ճանապարհների բեռնվածությունը:
6. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արմավիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
7. Բետոնի տեղափոխումն իրականացնել Հաշվետվությամբ նախատեսված ձևով՝ բացառելով շինհրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
8. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
9. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Այ ջի էյ ինվեստ» ՍՊԸ կողմից ներկայացված՝ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր բնակավայրի Լերմոնտով փողոցի թիվ 105/4 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Աստղիկ Վարդանյան